

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

1. Ներածական մաս	3
2. Ընթացիկ հաշիվ	7
2.1. Ապրանքների հաշվեկշիռ	8
2.1.1. Արտահանում	9
2.1.2. Ներմուծում	11
2.2. Ծառայություններ	13
2.3. Սկզբնական եկամուտներ	13
2.4. Երկրորդային եկամուտներ	14
3. Կապիտալի հաշիվ	14
4. Ֆինանսական հաշիվ	14
<i>Հավելված 1</i>	16
<i>ԼՂՀ վճարային հաշվեկշռի վերլուծական ներկայացումը 2016թ.</i>	
<i>Հավելված 2</i>	
<i>ԼՂՀ վճարային հաշվեկշռի հիմնական ցուցանիշների դինամիկան 2015-2016թթ.</i>	
	18
<i>Հավելված 3</i>	
<i>ԼՂՀ վճարային հաշվեկշռի հիմնական ցուցանիշների դինամիկան 2015-2016թթ. ըստ եռամսյակների</i>	
	20

## 1. Ներածական մաս

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վճարային հաշիվներ 2016թ» վիճակագրական ժողովածուն ընդգրկում է հանրապետության 2015-2016թթ արտաքին տնտեսական գործառնությունների՝ մասնավորապես ԼՂՀ վճարային հաշվեկշռի վերաբերյալ տվյալներ:

Վճարային հաշվեկշիռը վիճակագրական հաշվետվություն է (հաշվեկշիռ), որում համակարգված տեսքով արտացոլվում են ամփոփ տվյալներ հաշվետու ժամանակաշրջանում (եռամսյակ, տարի) այլ երկրների և միջազգային կազմակերպությունների հետ ԼՂՀ արտաքին տնտեսական գործառնությունների վերաբերյալ: Վճարային հաշվեկշռում գրանցվում են ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների միջև իրականացված բոլոր գործառնությունները, որոնք վերաբերվում են ապրանքներին, ծառայություններին, սկզբնական և երկրորդային եկամուտներին, կապիտալ տրանսֆերտներին, չարտադրված ոչ ֆինանսական ակտիվներին, ֆինանսական ակտիվներին և պարտավորություններին:

*Գործառնությունը* տնտեսական հոսք է, որն արտացոլում է որևէ տնտեսական արժեքի ստեղծումը, վերափոխումը, փոխանակումը, փոխանցումը կամ լուծարումը և կարող է ենթադրել ապրանքների և (կամ) ֆինանսական ակտիվների, ծառայությունների մատակարարման, աշխատանքի և կապիտալի տրամադրման սեփականության իրավունքի փոխանցումը:

Տվյալ տնտեսական տարածքի *ռեզիդենտ է* համարվում կառուցվածքային միավորը (իրավաբանական անձ և տնային տնտեսություն), եթե դրա տնտեսական շահերի հիմնական շրջանը (կենտրոնը) այդ երկրի տնտեսական տարածքում է: Ընդ որում տվյալ երկրում տնտեսական շահեր ունենալը նշանակում է, որ տվյալ երկրի տնտեսական տարածքում գոյություն ունի որոշակի տեղավորման վայր, կացարան, արտադրության կազմակերպման համար նախատեսված շենք, շինություն կամ այլ տարածք, որտեղ կամ որտեղից տնտեսվարող սուբյեկտն իրականացնում է որոշակի ծավալի տնտեսական գործունեություն այլ սուբյեկտների հետ:

Վճարային հաշվեկշիռը կառուցվում է հաշվապահական հաշվառման հետևյալ սկզբունքով. ամեն մի գործառնություն գրանցվում է կրկնակի՝ որևէ հաշվի կրեդիտում և մեկ այլ հաշվի դեբետում, ընդ որում ակտիվային հաշվի ավելացումը գրանցվում է դեբետում, իսկ նվազումը՝ կրեդիտում, պասիվային հաշվի ավելացումը գրանցվում է կրեդիտում, իսկ նվազումը՝ դեբետում: Կրկնակի գրանցման մեթոդի կիրառման պատճառն այն է, որ, որպես

կանոն, տնտեսական գործառնություններն իրենցից ներկայացնում են տնտեսական արժեքների (ֆինանսական, նյութական) փոխանակում:

Վճարային հաշվեկշիռը կազմված է երեք հիմնական հաշիվներից՝ ընթացիկ հաշվից, կապիտալի հաշվից և ֆինանսական հաշվից: Ընթացիկ հաշվում գրանցվում են ապրանքների, ծառայությունների, սկզբնական և երկրորդային եկամուտների, կապիտալի հաշվում՝ կապիտալ տրանսֆերտների, չարտադրված ոչ ֆինանսական ակտիվների, իսկ ֆինանսական հաշվում՝ ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների հետ կատարված գործառնությունները: Մեթոդաբանական առումով ընթացիկ հաշվի և կապիտալի հաշվի գումարը, բացարձակ մեծությամբ, հակառակ նշանով պետք է հավասար լինի ֆինանսական հաշվի մեծությանը, սակայն իրականում միշտ առաջանում են տարբերություններ, ինչը միջազգային պրակտիկայում ընդունված է անվանել «մաքուր սխալների և բացթողումների» հոդված:

ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայության (ԼՂՀ ԱՎԾ) կողմից ԼՂՀ վճարային հաշվեկշիռն առաջին անգամ կազմվել է 1999թ. համար: Սկսած 1999թ. մինչև 2014թ.՝ Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) կողմից մշակված «Վճարային հաշվեկշիռի ձեռնարկ 5»-ի հոդվածներին (BPM-5), իսկ 2015թ. սկսած «Վճարային հաշվեկշիռի և միջազգային ներդրումային դիրքի ձեռնարկ 6»-ի հոդվածներին համապատասխան: Միաժամանակ, վերանայվել են 2014թ. վճարային հաշվեկշիռի տվյալները՝ ամբողջովին համապատասխանեցնելով «Վճարային հաշվեկշիռի և միջազգային ներդրումային դիրքի ձեռնարկ 6»-ի դրույթներին:

ԼՂՀ վճարային հաշվեկշիռի կազմման համար հիմք են հանդիսացել ԼՂՀ ՖՆ կազմակերպական, հսկողական, եկամուտների հաշվառման և վերլուծության վարչության ապրանքների ներմուծման և արտահանման հաշվառման, կազմակերպություններից ստացված և բանկային համակարգի տվյալները, կիրառվել են Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) կողմից մշակված մեթոդաբանական սկզբունքները, ինչպես նաև նրանց կողմից օգտագործվող հրահանգները և տեղեկագրերը:

**Ընթացիկ հաշիվն** ընդգրկում է տնտեսական արժեքների հետ կապված յուրաքանչյուր գործառնություն (բացառությամբ ֆինանսական ակտիվների գործառնությունների), որն իրականացվում է ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների միջև:

Ընթացիկ հաշվում արտացոլվում են՝

- ապրանքների և ծառայությունների արտահանումը և ներմուծումը,
- սկզբնական եկամուտները,
- երկրորդային եկամուտները:

**Կապիտալի հաշվում** ներառվում են ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների միջև ստացվելիք և վճարվելիք կապիտալ տրանսֆերտները և ռեզիդենտների ու ոչ ռեզիդենտների միջև ձեռք բերված և վաճառված չարտադրված ոչ ֆինանսական ակտիվները: *Կապիտալ տրանսֆերտները* կարող են լինել բնաիրային և արժեքային: Արժեքային ձևն անմիջականորեն կամ անուղղակի կապված է հիմնական կապիտալի իրացման կամ ձեռքբերման, իսկ բնաիրայինը՝ հիմնական կապիտալի սեփականության իրավունքի փոխանցման հետ:

*Ոչ արտադրական ոչ ֆինանսական ակտիվների ձեռքբերում/իրացում* մասը ներառում է գործառնություններ այն նյութական ակտիվների հետ, որոնք կարող են օգտագործվել կամ անհրաժեշտ են ապրանքների և ծառայությունների արտադրության համար, սակայն արտադրության արդյունք չեն հանդիսանում (օրինակ՝ հող, բնական պաշարներ), մակ գործառնություններ՝ չարտադրված ոչ նյութական բնույթ ունեցող ակտիվների հետ (օրինակ՝ պատենտներ, հեղինակային իրավունքներ, լիցենզիաներ, ապրանքային նիշեր և այլն):

**Ֆինանսական հաշվում** արտացոլվում են ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների միջև ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների հետ կատարված գործառնությունները:

Ֆինանսական հաշիվն իր մեջ ներառում է՝

- ուղղակի ներդրումներ,
- պորտֆելային ներդրումներ,
- ֆինանսական ածանցյալներ,
- այլ ներդրումներ,
- պահուստային ակտիվներ:

*Ուղղակի ներդրումը* կատարվում է արտասահմանյան ուղղակի ներդրողների կողմից, որոնք ձգտում են ձեռք բերել ուղղակի ներդրումով իրավաբանական անձի գործունեության վրա կայուն, տևական ազդեցություն: Ուղղակի ներդրող (ինվեստոր) է համարվում ոչ ռեզիդենտ միավորը, նրա հետ կապված կամ համագործակցող ոչ ռեզիդենտ կազմակերպությունը (ընկերությունը), որին պատկանում է ԼՂՀ ռեզիդենտ միավորի

բաժնետիրական կապիտալի ոչ պակաս, քան 10%-ը: Ուղղակի ներդրումները լինում են բաժնետիրական կապիտալի, վերաներդրված եկամուտների և այլ կապիտալի տեսքով:

*Պորտֆելային ներդրումն* օտարերկրյա ներդրողների այն կապիտալ ներդրումն է, որը թույլ է տալիս օտարերկրյա ներդրումով կազմակերպությունում ունենալ սահմանափակ ազդեցություն և ստանալ որոշակի շահույթ, որը կարգավորում է կողմերի միջև կնքվող պայմանագրով: Պորտֆելային ներդրումները լինում են *կապիտալի բաժնետոմսերի և պարտքի արժեթղթերի տեսքով*:

*Այլ ներդրումը* ներդրումների այն մնացած մասն է, որը ներառում է բոլոր տեսակի ֆինանսական գործառնությունները, որոնք չեն ընդգրկվել ուղղակի և պորտֆելային ներդրումներում: Այլ ներդրումները լինում են փոխառությունների, վարկերի՝ դրամական և առևտրային, դեպոզիտների և այլնի տեսքով:

*Մաքուր սխալները և բացթողումները՝* վճարային հաշվեկշռի կարգավորող հոդված է, որը որպես դրական և բացասական հաշվեկշռի մնացորդ, առաջանում է վճարային հաշվեկշռում գրանցված գործառնությունների ամփոփման արդյունքում:


## 2 Ընթացիկ հաշիվ

2016թ. ԼՂՀ վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի պակասուրդը կազմել է 45376.2 մլն դրամ, որը 2015թ. համեմատ նվազել է 15.9 տոկոսով:

Ապրանքների գծով բացասական հաշվեկշիռը 2016թ. 2015թ. նկատմամբ նվազել է 7.9 տոկոսով, ինչը ապրանքների արտահանման ծավալի 31.0 տոկոս աճի (9187.7 մլն դրամ) պայմաններում ներմուծման ծավալի 2.1 տոկոս աճի (2391.3 մլն դրամ) հետևանք է: Ծառայությունների գծով բացասական հաշվեկշիռը 2015թ. նկատմամբ աճել է 3.6 անգամ, որը հիմնականում տրանսպորտային ծառայության՝ փոստային և սուրհանդակային ծառայությունների ծավալների աճի արդյունք է: Սկզբնական եկամուտների հաշվեկշիռը կազմել է -1619.9 մլն դրամ, իսկ երկրորդային եկամուտների հաշվեկշիռը՝ 38488.6 մլն դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 6.8 տոկոսով:

**Աղյուսակ 1: 2015-2016թթ.ԼՂՀ վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի հոդվածները (մլն դրամ)**

	2015թ.	2016թ.	Աճի տեմպը,%
ԸՆԹԱՅԻՆ ՀԱՇԻՎ	-53969.1	-45376.2	84.1
ԱՊՐԱՆՔՆԵՐ	-86356.4	-79560.0	92.1
Կրեդիտ	29666.1	38853.8	131.0
Դեբետ	116022.5	118413.8	102.1
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	-753.6	-2684.9	3.6 անգ
Կրեդիտ	8476.9	7280.5	85.9
Դեբետ	9230.5	9965.4	108.0
ՍԿԶԲՆԱԿԱՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ	-2908.5	-1619.9	55.7
Կրեդիտ	849.2	1724.5	2.0 անգ
Դեբետ	3757.7	3344.4	89.0
ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ	36049.5	38488.6	106.8
Կրեդիտ	36238.4	38687.5	106.8
Դեբետ	188.9	198.9	105.3



**Գծապատկեր 1: Ընթացիկ հաշվի հոդվածների հաշվեկշիռներն ըստ եռամսյակների (մլն դրամ):**

Գծապատկերից ակնհայտ է, որ ԼՂՀ վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի պակասուրդը հիմնականում պայմանավորված է ապրանքների պակասուրդի դինամիկայով, որն էլ ապրանքների ներմուծման հետևանք է: Այդ պակասուրդը ցույց է տալիս, որ մեր հանրապետությունը արտադրական ներուժի սակավության հետևանքով բնակչության և հիմնական արտադրական պահանջարկի բավարարումն ապահովում է ներմուծման ծավալների հաշվին: Իսկ ինչ վերաբերում է արտահանման ծավալներին, պետք է նշել, որ ի տարբերություն նախորդ տարվա, հաշվետու տարվա արդյունքներով այն բավականին աճել է: Ընթացիկ հաշվի պակասուրդի կրճատմանը խոչընդոտում են նաև զուտ գործոնային եկամուտների փոքր ծավալները: 2016թ. ընթացիկ հաշվի պակասուրդը կազմել է ՀՆԱ-ի 19.8 տոկոսը՝ 2015թ. 25.8 տոկոսի դիմաց:

**Աղյուսակ 2: 2015-2016թթ. ընթացիկ հաշվի հոդվածների հաշվեկշիռները ՀՆԱ-ի նկատմամբ (տոկոսներով)**

	2015թ.	2016թ.
ԸՆԹԱՅԻԿ ՀԱՇԻՎ	25,8	19,8
ԱՊՐԱՆՔՆԵՐ	41,3	34,6
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	0,4	1,2
ՄԿՁԲՆԱԿԱՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ	1,4	0,7
ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ	17,2	16,8

Արտաքին աշխարհից երկրի կախվածության մասին է վկայում տնտեսության բացվածության ցուցանիշը, որը 2016թ. կազմել է 35.8 տոկոս՝ 2015թ. 41.6 տոկոսի դիմաց: Ինչքան բարձր է այս ցուցանիշը, այնքան բացված է համարվում երկրի տնտեսությունը:

**2.1. Ապրանքների հաշվեկշիռ**

Ապրանքների հաշվեկշռի համար հիմք են հանդիսացել ապրանքների ներմուծման ու արտահանման մասին տեղեկությունները՝ ստացված ԼՂՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայությունից և վիճակագրական հաշվետվություններից: 2016թ. բացասական հաշվեկշիռն ապրանքների գծով կազմել է 79560.0 մլն դրամ (ներմուծումը՝ ՖՕԲ գներով), որը 2015թ. համեմատ նվազել է 7.9 տոկոսով:

2016թ. ԼՂՀ արտաքին առևտրաշրջանառության ծավալը (ներմուծումը՝ ՄԻՖ գներով) կազմել է 162004.0 մլն դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճել է 7.8 տոկոսով :

**2.1.1. Արտահանում**

2016թ. արտահանման ծավալը կազմել է 38853.7 մլն դրամ՝ 2015թ. 29666.1 մլն դրամի դիմաց:


**Աղյուսակ 3: ԼՂՀ արտահանումն ըստ խոշորացված ապրանքախմբերի 2015-2016թթ. /հազ. ԱՄՆ դոլար/**

		2015թ.	2016թ.	Աճի տեմպը, %
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ</b>	<b>62082.2</b>	<b>81106.3</b>	<b>130.6</b>
I	Կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք	4110.0	6031.9	146.8
II	Բուսական ծագման արտադրանք	6438.6	13944.9	2.2 անգ
III	Կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր	746.5	418.4	56.1
IV	Պատրաստի սննդի արտադրանք	4706.3	4373.6	92.9
V	Հանքահումքային մթերքներ	25256.2	35524.5	140.7
VI	Քիմիական արտադրության ապրանքներ	80.0	211.5	2.6 անգ
VII	Պլաստմասսա և դրանից իրեր, կաուչուկ և ռետինե իրեր	42.1	1.0	2.4
VIII	Կաշվե հումք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր	22.6	21.4	94.7
IX	Փայտ և փայտյա իրեր	998.4	1024.3	102.6
X	Թուղթ և թղթյա իրեր	21.3	0.9	4.2
XI	Մանածագործական իրեր	1146.5	760.6	66.3
XII	Կոշիկեղեն, հովանոցներ, գլխարկներ	1349.4	1825.4	135.3
XIII	Իրեր քարից, գիպսից, ցեմենտից: Ապակի և դրանից իրեր	356.7	307.4	86.2
XIV	Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր	9673.0	11777.4	121.8
XV	Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր	173.0	44.8	25.9
XVI	Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ	4778.6	3089.0	64.6
XVII	Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ	1515.5	1260.0	83.1
XVIII	Սարքեր և ապարատներ	52.8	23.1	43.8
XX	Կահույք, խաղալիքներ և այլ պատրաստի իրեր	613.9	466.2	75.9
XXI	Արվեստի ստեղծագործություններ, հնաոճ իրեր	0.8	-	-



Աղյուսակից ակնհայտ է, որ արտահանման ծավալի մեջ մեծ տեսակարար կշիռ են կազմում հանքահումքային մթերքներ, բուսական ծագման արտադրանք, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր, կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք, պատրաստի սննդի արտադրանք, մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ ապրանքախմբերը:

2016թ. արտաքին ապրանքաշրջանառության մեջ արտահանման տեսակարար կշիռը կազմել է 24.0 տոկոս՝ 2015թ. 19.7 տոկոսի դիմաց:



**Գծապատկեր 2:** Արտահանման կառուցվածքը ըստ ապրանքախմբերի (տոկոսներով):

2016թ. 2015թ. նկատմամբ արտահանման ծավալի աճ է արձանագրվել 20 ապրանքախմբերից 7-ի գծով (քիմիական արտադրության ապրանքներ, բուսական ծագման արտադրանք, կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք, հանքահումքային մթերքներ, կոշկեղեն, հովանոցներ, գլխարկներ, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր, փայտ և փայտյա իրեր): Միևնույն ժամանակ նախորդ տարվա համեմատ արտահանման ծավալի կտրուկ նվազում է գրանցվել հետևյալ ապրանքախմբերում՝ պլաստմասսա և դրանից իրեր, կաուչուկ և ռետինե իրեր, թուղթ և թղթյա իրեր, ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր, սարքեր և ապարատներ, կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր, մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ, մանածագործական իրեր, կահույք, խաղալիքներ, այլ պատրաստի իրեր և այլն:

Արտահանման միջին հակվածությունը՝ արտահանման տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ 2016թ. կազմել է 17.0 տոկոս՝ 2015թ. 14.2 տոկոսի դիմաց:

**2.1.2. Ներմուծում**

2016թ. ներմուծման ծավալը (ՄԻՖ գներով) կազմել է 123150.3 մլն դրամ՝ 2015թ. 120663.4 մլն դրամի դիմաց:


**Աղյուսակ 4: ԼՂՀ ներմուծումն ըստ խոշորացված ապրանքախմբերի 2015-2016թթ. /հազ. ԱՄՆ դոլար/**

		2015թ.	2016թ.	Աճի տեմպը, %
	<b>ԸՆԴԱՍԵՆԸ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ</b>	<b>252474.9</b>	<b>256859.2</b>	<b>101.7</b>
I	Կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք	7211.8	7546.3	104.6
II	Բուսական ծագման արտադրանք	17554.4	16600.4	94.6
III	Կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր	1636.0	1985.5	121.4
IV	Պատրաստի սննդի արտադրանք	40785.7	45559.2	111.7
V	Հանքահումքային մթերքներ	50094.7	43315.1	86.5
VI	Քիմիական արտադրության ապրանքներ	18709.6	18678.0	99.8
VII	Պլաստմասսա և դրանից իրեր, կաուչուկ և ռետինե իրեր	1956.5	1600.9	81.8
VIII	Կաշվե հումք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր	589.0	924.1	156.9
IX	Փայտ և փայտյա իրեր	1448.5	1131.7	78.1
X	Թուղթ և թղթյա իրեր	1505.8	1240.0	82.3
XI	Մանածագործական իրեր	9268.8	8643.6	93.3
XII	Կոշկեղեն, հովանոցներ, գլխարկներ	1865.1	1522.8	81.6
XIII	Իրեր քարից, գիպսից, ցեմենտից: Ապակի և դրանից իրեր	5954.6	6130.4	103.0
XIV	Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր	2543.2	15438.3	6.1 անգ
XV	Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր	9642.3	9297.7	96.4
XVI	Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ	39343.8	23953.2	60.9
XVII	Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ	22974.4	35111.0	152.8
XVIII	Սարքեր և ապարատներ	1402.9	1216.8	86.7
XX	Կահույք, խաղալիքներ և այլ պատրաստի իրեր	17971.9	16947.1	94.3

ԼՂՀ ՎՃԱՐԱՅԻՆ ՏԱՇՎԵԿՇԻՌ

		2015թ.	2016թ.	Աճի տեմպը, %
XXI	Արվեստի ստեղծագործություններ, հնաոճ իրեր	15.9	17.1	107.5

Ներմուծման տեսակարար կշիռը արտաքին առևտրաշրջանառության մեջ 2015թ. կազմել է 76.0 տոկոս՝ 2015թ. 80.3 տոկոսի դիմաց:



**Գծապատկեր 3:** Ներմուծման կառուցվածքը ըստ ապրանքախմբերի (տոկոսներով):

Եթե ըստ խոշորացված ապրանքախմբերի 2016թ. ԼՂՀ ներմուծումը համեմատենք նախորդ տարվա հետ, ապա աճի ավելի բարձր ցուցանիշներ ունեն հետևյալ ապրանքախմբերը՝ թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրերը (6.1անգամ), կաշվե հումք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրերը (56.9 տոկոսով), վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտային միջոցները (52.8 տոկոսով), կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպերը (21.4 տոկոսով) և այլն: Նկատենք նաև, որ զգալիորեն նվազել են մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ, փայտ և փայտյա իրեր, կոշկեղեն, հովանոցներ, գլխարկներ, պլաստմասսա և դրանցից իրեր, կաուչուկ և ռետինե իրեր, թուղթ և թղթյա իրեր, հանքահումքային մթերքներ, սարքեր և ապարատներ ապրանքախմբերի ներմուծման ծավալները:

Ներմուծման միջին հակվածությունը՝ ներմուծման տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ, 2016թ. կազմել է 53.7 տոկոս՝ 2015թ. 57.6 տոկոսի դիմաց:

## **2.2. Ծառայություններ**

Ընթացիկ հաշվի ծառայություններ հողվածը բաղկացած է տրանսպորտային ծառայություններից, ճանապարհորդային ծառայություններից, շինարարական ծառայություններից, հեռահաղորդակցության, համակարգչային և տեղեկատվական ծառայություններից, այլ գործնական ծառայություններից, ինչպես նաև պետական ապրանքներ և ծառայություններ:

2016թ. ծառայությունների գծով հաշվեկշիռը կազմել է -2684.9 մլն դրամ, որտեղ 7280.5 մլն դրամը կազմել է արտահանումը, իսկ 9965.4 մլն դրամը՝ ներմուծումը (2015թ. արտահանման 8476.9 մլն դրամի և ներմուծման 9230.5 մլն դրամի դիմաց): 2016թ. ծառայությունների բացասական հաշվեկշռի ավելացումը 2015թ. համեմատ տեղի է ունեցել տրանսպորտի բացասական հաշվեկշռի աճի հաշվին:

Ծառայությունների հաշվեկշռի մեջ մեծ տեսակարար կշիռ են կազմում շինարարական ծառայությունները, որոնց գծով արտահանումը կազմել է 3729.4 մլն դրամ:

Տրանսպորտային ծառայությունների բացասական հաշվեկշիռը կազմել է -4097.0 մլն դրամ, ըստ որում արտահանումը՝ 2441.4 մլն դրամ, ներմուծումը՝ 6538.4 մլն դրամ: 2015թ. նույնաճան ցուցանիշները կազմել են համապատասխանաբար՝ 2197.2 և 4858.2 մլն դրամ:

Ճանապարհորդության հետ կապված ծառայությունների գծով բացասական հաշվեկշիռը 2016թ. կազմել է -1670.7 մլն դրամ (2015թ. -2286.4 մլն դրամի դիմաց):

## **2.3. Սկզբնական եկամուտներ**

Սկզբնական եկամուտների գծով հաշվեկշիռը ներառում է բոլոր տեսակի ստացված և վճարված եկամուտները և բաղկացած է հիմնականում սեզոնային և սահմանամերձ գոտիներում աշխատողների կողմից ԼՂՀ փոխանցված և ԼՂՀ-ից ուղարկված եկամուտներից, ուղղակի, պորտֆելային և այլ ներդրումներից ստացված եկամուտներից (ներառյալ վերաներդրված եկամուտները): Այսպես, եկամուտների հաշվեկշիռը 2016թ. կազմել է -1619.9 մլն դրամ, որից արտահանումը՝ 1724.5 մլն դրամ, իսկ ներմուծումը՝ 3344.4 մլն դրամ:

Աշխատողների (ներառյալ սահմանային, սեզոնային և այլ) եկամուտների գծով բացասական հաշվեկշիռը 2016թ. կազմել է -670.6 մլն դրամ, այդ թվում՝ արտահանումը 919.0 մլն դրամ, իսկ ներմուծումը՝ 1589.6 մլն դրամ:

Ներդրումներից եկամուտների բացասական հաշվեկշիռը 2016թ. կազմել է -949.3 մլն դրամ՝ 2015թ. -1975.6 մլն դրամի դիմաց, որը ձևավորվել է ուղղակի և այլ ներդրումներից: Հարկ է ընդգծել, որ ներդրումներ եկամուտներից հողվածում ներկայացված տվյալները կապված ուղղակի, պորտֆելային ներդրումների, ինչպես նաև արժեթղթերի գործարքների հետ արտացոլում են հիմնականում բանկային բնագավառի գործարքները:

## **2.4. Երկրորդային եկամուտներ**

2016թ. երկրորդային եկամուտների հաշվեկշիռը կազմել է 38488.6 մլն դրամ և նախորդ տարվա համեմատ աճել է 6.8 տոկոսով: Երկրորդային եկամուտների մեջ գերակշռում են պետական կառավարման համակարգի տարատեսակ ընթացիկ տրանսֆերտները, որոնք 2016թ. կազմել են 28744.7 մլն դրամ (կամ երկրորդային եկամուտների 74.7 տոկոսը):

Մասնավոր տրանսֆերտների հաշվեկշիռը 2016թ. դրական է և կազմել է 9743.8 մլն դրամ:

## **3. Կապիտալի հաշիվ**

Կապիտալի հաշվի հաշվեկշիռը 2016թ. կազմել է 11236.7 մլն դրամ և 2015թ. նկատմամբ նվազել է 6.7 տոկոսով: Կապիտալի հաշիվը գոյացել է միայն կապիտալ տրանսֆերտներից:

Պետական կառավարման հատվածի կապիտալ տրանսֆերտները 2016թ. կազմել են 9135.4 մլն դրամ կամ ընդհանուր կապիտալ տրանսֆերտների 81.3 տոկոսը (2015թ. նկատմամբ աճել է 14.4 տոկոսով):

Մասնավոր հատվածի կապիտալ տրանսֆերտների գումարը 2016թ. կազմել է 2101.3 մլն դրամ և նախորդ տարվա նկատմամբ նվազել է 48.1 տոկոսով:

## **4. Ֆինանսական հաշիվ**

Ֆինանսական հաշիվը հանդիսանում է ընթացիկ հաշվի թղթակցային հաշիվը: Ֆինանսական հաշիվն իր մեջ ներառում է ուղղակի, պորտֆելային և այլ ներդրումները:

Ֆինանսական հաշվի բացասական հաշվեկշիռը 2016թ. կազմել է 43276.8 մլն դրամ:

Ինչ վերաբերում է տնտեսության մեջ իրականացված *օտարերկրյա ուղղակի ներդրումների* տեսքով մասնավոր կապիտալի հոսքերին, ապա այստեղ արձանագրվել է

կտրուկ նվազում. 2016թ. այն կազմել է 1866.4 մլն դրամ և 2015թ. նկատմամբ նվազել է 80.2 տոկոսով: Օտարերկրյա ուղղակի ներդրումները հիմնականում կենտրոնացված են արդյունաբերության (հանքագործական, վերամշակող և սննդի), շինարարության ճյուղերում և ծառայությունների ոլորտում (կապ, հյուրանոց):

Օտարերկրյա ուղղակի ներդրումների աշխարհագրական վերլուծությունը ցույց է տալիս, որ կապիտալի ներհոսքը հիմնականում ձևավորվել է ի հաշիվ տասնչորս երկրների՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Ավստրալիա, Միացյալ Արաբական Էմիրություններ, Իրանի Իսլամական Հանրապետություն, Լիբանան, Շվեյցարիա, Հայաստանի Հանրապետություն, Ռուսաստանի Դաշնություն, Ֆրանսիա, Գերմանիա, Կանադա, Իսպանիա, Ուկրաինա, Նիդերլանդներ:

Տնտեսավարող սուբյեկտների տարածքային կառուցվածքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ օտարերկրյա ներդրումներով կազմակերպությունները մեծամասամբ կենտրոնացված են Ստեփանակերտ քաղաքում, Մարտակերտի, Ասկերանի և Շուշիի շրջաններում:

Օտարերկրյա ուղղակի ներդրումները մեկ շնչի հաշվով 2016թ. կազմել են 12774.8 դրամ՝ 2015թ. 61686.3 դրամի դիմաց, իսկ ՀՆԱ-ի նկատմամբ կազմել են համապատասխանաբար՝ 0.8 տոկոս և 4.4 տոկոս:

*Այլ ներդրումների* բացասական հաշվեկշիռը 2016թ. կազմել է 41410.4 մլն դրամ, որտեղ 146731.0 մլն դրամը՝ ակտիվներն են, իսկ 188141.4 մլն դրամը՝ պարտավորությունները: 2015թ. համեմատ ակտիվները աճել են 12.2 տոկոսով, իսկ պարտավորությունները՝ 14.7 տոկոսով:

ԼՂՀ վճարային հաշվեկշռի վերլուծական ներկայացումը  
2016 թվականին

/մլն դրամ/

	2016թ.
<b>ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇԻՎ</b>	<b>-45376,2</b>
Կրեդիտ	86546,3
Դեբետ	131922,5
<b>ԱՊՐԱՆՔՆԵՐ և ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	<b>-82244,9</b>
Կրեդիտ	46134,3
Դեբետ	128379,2
<b>ԱՊՐԱՆՔՆԵՐ</b>	<b>-79560,0</b>
Կրեդիտ	38853,7
Դեբետ	118413,7
<i>Ապրանքների առևտուրն ըստ վճարային հաշվեկշռի հիմքի</i>	<i>-79560,0</i>
Կրեդիտ	38853,7
Դեբետ	118413,8
<b>ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	<b>-2684,9</b>
Կրեդիտ	7280,5
Դեբետ	9965,4
Տրանսպորտ	-4097,0
Կրեդիտ	2441,4
Դեբետ	6538,4
Ճանապարհորդություն	-1670,7
Կրեդիտ	1088,5
Դեբետ	2759,2
Այլ	3082,8
Կրեդիտ	3750,6
Դեբետ	667,8
<b>ՄԿՁԲՆԱԿԱՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ</b>	<b>-1619,9</b>
Կրեդիտ	1724,5
Դեբետ	3344,4
<b>ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ</b>	<b>38488,6</b>
Կրեդիտ	38687,5
Դեբետ	198,9
<b>ԿԱՊԻՏԱԼ ՀԱՇԻՎ</b>	<b>11236,7</b>
Կրեդիտ	11236,7
Դեբետ	0,0
<i>Չուտ վարկավորում(+)</i> <i>զուտ փոխառություն(-) ընթացիկ և կապիտալի հաշիվներից</i>	<i>-34139,6</i>
<b>ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇԻՎ</b>	<b>-43276,8</b>
<i>Չուտ վարկավորում(+)</i> <i>զուտ փոխառություն(-) ֆինանսական հաշիվից</i>	<i>-43276,8</i>
<b>Ուղղակի ներդրումներ</b>	<b>-1866,4</b>
Չուտ ֆինանսական ակտիվների ձեռք բերում	0,0
Չուտ պարտավորությունների ստանձնում	1866,4
<b>Պորտֆելային ներդրումներ</b>	<b>0,0</b>
Չուտ ֆինանսական ակտիվների ձեռք բերում	0,0
Չուտ պարտավորությունների ստանձնում	0,0

ԼՂՏ ՎՃԱՐԱՅԻՆ ՏԱՇՎԵԿՇԻՌ

	2016թ.
Ֆինանսականաձանցյալներ(բացառությամբ պահուստների) և աշխատողների ֆոնդային օպցիոններ	0,0
<b>Այլ ներդրումներ</b>	<b>-41410,4</b>
Չուտ ֆինանսական ակտիվների ձեռք բերում	146731,0
Չուտ պարտավորությունների ստանձնում	188141,4
<b>Պահուստային ակտիվներ</b>	<b>0,0</b>
<b>Չուտ սխալներ և բացթողումներ</b>	<b>-9137,3</b>



Հավելված2

ԼՂՀ վճարային հաշվեկշռի վերլուծական ներկայացումը  
2015-2016թվականներին

(հազ. ԱՄՆ դոլար )

	2015թ.	2016թ.
<b>ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇԻՎ</b>	<b>-112901,6</b>	<b>-94711,0</b>
Կրեդիտ	157408,9	180418,8
Դեբետ	270310,5	275129,8
<b>ԱՊՐԱՆՔՆԵՐ և ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	<b>-182256,0</b>	<b>-171446,2</b>
Կրեդիտ	79800,6	96313,4
Դեբետ	262056,6	267759,6
<b>ԱՊՐԱՆՔՆԵՐ</b>	<b>-180665,7</b>	<b>-165873,7</b>
Կրեդիտ	62082,1	81106,3
Դեբետ	242747,8	246980,0
<i>Ապրանքների առևտուրն ըստ վճարային հաշվեկշռի հիմքի</i>	<i>-180665,7</i>	<i>-165873,7</i>
Կրեդիտ	62082,1	81106,3
Դեբետ	242747,8	246980,0
<b>ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	<b>-1590,2</b>	<b>-5572,6</b>
Կրեդիտ	17718,5	15207,1
Դեբետ	19308,7	20779,7
Տրանսպորտ	-5567,9	-8552,4
Կրեդիտ	4596,4	5087,0
Դեբետ	10164,3	13639,4
Ճանապարհորդություն	-4780,7	-3476,8
Կրեդիտ	2941,8	2271,6
Դեբետ	7722,6	5748,4
Այլ	8758,3	6456,6
Կրեդիտ	10180,2	7848,5
Դեբետ	1421,9	1391,9
<b>ՄԿՁԲՆԱԿԱՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ</b>	<b>-6082,0</b>	<b>-3361,5</b>
Կրեդիտ	1776,7	3594,1
Դեբետ	7858,8	6955,6
<b>ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ</b>	<b>75436,4</b>	<b>80096,7</b>
Կրեդիտ	75831,5	80511,3
Դեբետ	395,1	414,6
<b>ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՇԻՎ</b>	<b>25165,2</b>	<b>23471,2</b>
Կրեդիտ	25165,2	23471,2
Դեբետ	0,0	0,0
<i>Չուտ վարկավորում(+) և կապիտալի հաշիվներից</i>	<i>-87736,5</i>	<i>-71239,8</i>
<b>ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇԻՎ</b>	<b>-84501,6</b>	<b>-90240,1</b>
<i>Չուտ վարկավորում(+) զինանասական հաշիվից</i>	<i>-84501,6</i>	<i>-90240,1</i>
<b>Ուղղակի ներդրումներ</b>	<b>-19092,4</b>	<b>-3888,6</b>
Չուտ ֆինանսական ակտիվների ձեռք բերում	0,0	0,0
Չուտ պարտավորությունների ստանձնում	19092,4	3888,6
<b>Պորտֆելային ներդրումներ</b>	<b>4647,2</b>	<b>0,0</b>
Չուտ ֆինանսական ակտիվների ձեռք բերում	4647,2	0,0

ԼՂՏ ՎՃԱՐԱՅԻՆ ՏԱՇՎԵԿՇԻՌ

	2015թ.	2016թ.
Չուտ պարտավորությունների ստանձնում	0,0	0,0
Ֆինանսական անանցյալներ (բացառությամբ պահուստների) և աշխատողների ֆոնդային օպցիոններ	0,0	0,0
<b>Այլ ներդրումներ</b>	<b>-70056,4</b>	<b>-86351,5</b>
Չուտ ֆինանսական ակտիվների ձեռք բերում	273105,6	305743,7
Չուտ պարտավորությունների ստանձնում	343162,0	392095,2
<b>Պահուստային ակտիվներ</b>	<b>0,0</b>	<b>0,0</b>
<b>Չուտ սխալներ և բացթողումներ</b>	<b>3234,8</b>	<b>-19000,3</b>

ԼՂՏ վճարային հաշվեկշռի վերլուծական ներկայացումը  
2015-2016 թվականներին ըստ եռամսյակների

(հազ. ԱՄՆ դոլար )

	2015				2016			
	I	II	III	IV	I	II	III	IV
<b>ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇԻՎ</b>	-27339,1	-24406,3	-31134,5	-30021,8	-12340,1	-21229,2	-29284,4	-31857,3
<b>Կրեդիտ</b>	28055,7	46383,7	41765,3	41204,2	31546,2	44782,9	47898,0	56191,7
<b>Դեբետ</b>	55394,7	70790,0	72899,8	71226,0	43886,3	66012,1	77182,4	88049,0
<b>ԱՊՐԱՆՔՆԵՐ և ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	-41138,1	-46056,5	-48042,7	-47018,7	-29621,8	-41781,8	-43713,3	-56329,3
<b>Կրեդիտ</b>	11843,4	23682,0	22432,5	21842,6	12103,3	23176,2	31362,7	29671,2
<b>Դեբետ</b>	52981,5	69738,5	70475,2	68861,4	41725,1	64958,0	75076,0	86000,5
<b>ԱՊՐԱՆՔՆԵՐ</b>	-39182,0	-44114,7	-49064,4	-48304,7	-28214,4	-40499,2	-44369,1	-52791,1
<b>Կրեդիտ</b>	10189,2	21025,6	16027,1	14840,2	10346,2	20264,6	25830,0	24665,5
<b>Դեբետ</b>	49371,1	65140,3	65091,6	63144,9	38560,6	60763,8	70199,1	77456,5
<i>Ապրանքների առևտուրն ըստ վճարային հաշվեկշռի հիմքի</i>	-39182,0	-44114,7	-49064,4	-48304,7	-28214,4	-40499,2	-44369,1	-52791,0
<b>Կրեդիտ</b>	10189,2	21025,6	16027,1	14840,2	10346,2	20264,6	25830,0	24665,5
<b>Դեբետ</b>	49371,1	65140,3	65091,6	63144,9	38560,6	60763,8	70199,1	77456,5
<b>ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	-1956,1	-1941,8	1021,8	1285,9	-1407,5	-1282,6	655,8	-3538,3
<b>Կրեդիտ</b>	1654,3	2656,4	6405,4	7002,4	1757,0	2911,6	5532,7	5005,8
<b>Դեբետ</b>	3610,4	4598,3	5383,6	5716,5	3164,5	4194,2	4876,9	8544,1
<b>Տրանսպորտ</b>	-1279,6	-1484,8	-1423,7	-1379,8	-690,0	-1126,1	-1558,5	-5177,8
<b>Կրեդիտ</b>	928,3	1118,1	1355,9	1194,1	1051,6	1446,9	1464,4	1124,1
<b>Դեբետ</b>	2207,9	2602,9	2779,6	2573,9	1741,6	2573,0	3022,9	6301,9
<b>Ճանապարհորդություն</b>	-687,8	-769,9	-1270,0	-2052,9	-839,9	-677,9	-745,7	-1213,3

ԼՂՏ ՎՃԱՐԱՅԻՆ ՆԱՇՎԵԿՇԻՌ

	2015				2016			
Կրեդիտ	469,0	876,7	978,2	618,1	332,3	589,6	755,4	594,3
Դեբետ	1156,8	1646,6	2248,2	2671,0	1172,2	1267,5	1501,1	1807,6
Այլ	11,3	312,9	3715,5	4718,6	122,4	521,3	2960,0	2852,9
Կրեդիտ	257,0	661,7	4071,3	5190,2	373,1	875,1	3312,8	3287,5
Դեբետ	245,7	348,8	355,8	471,6	250,7	353,8	352,8	434,6
<b>ՄԿՁԲՆԱԿԱՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ</b>	-1961,7	-511,0	-1849,8	-1759,5	-1579,3	-341,9	-1518,0	77,7
Կրեդիտ	433,6	422,1	453,9	467,2	516,0	575,8	513,3	1989,0
Դեբետ	2395,2	933,1	2303,7	2226,7	2095,3	917,7	2031,3	1911,3
<b>ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ</b>	15760,7	22161,2	18758,0	18756,4	18860,9	20894,5	15946,9	24394,4
Կրեդիտ	15778,7	22279,6	18878,9	18894,3	18926,8	21030,9	16022,0	24531,6
Դեբետ	18,0	118,4	120,9	137,8	65,9	136,4	75,1	137,2
<b>ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՇԻՎ</b>	1568,4	4328,4	8124,7	11143,6	3128,4	5293,0	9849,6	5200,2
Կրեդիտ	1568,4	4328,4	8124,7	11143,6	3128,4	5293,0	9849,6	5200,3
Դեբետ	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0
<i>Չուտ վարկավորում(+)</i> <i>զուտ փոխառություն(-)</i> <i>ընթացիկ և կապիտալի հաշիվներից</i>	-25770,7	-20077,9	-23009,7	-18878,2	-9211,7	-15936,2	-19434,8	-26657,1
<b>ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇԻՎ</b>	-24796,5	-23509,9	-25806,0	-10389,3	-14428,8	-24287,7	-23440,2	-28083,4
<i>Չուտ վարկավորում(+)</i> <i>զուտ փոխառություն(-)</i> <i>ֆինանսական հաշվից</i>	-24796,5	-23509,9	-25806,0	-10389,3	-14428,8	-24287,7	-23440,2	-28083,4
<b>Ուղղակի ներդրումներ</b>	-298,7	-4439,5	-8586,5	-5767,6	-838,2	-614,8	-1144,0	-1291,6
Չուտ ֆինանսական ակտիվների ձեռք բերում	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0
Չուտ պարտավորությունների ստանձնում	298,7	4439,5	8586,5	5767,6	838,2	614,8	1144,0	1291,6
<b>Պորտֆելային ներդրումներ</b>	0,0	0,0	4647,2	0,0	0,0	0,0	0,0	0,0
Չուտ ֆինանսական ակտիվների ձեռք բերում	0,0	0,0	4647,2	0,0	0,0	0,0	0,0	0,0
Չուտ պարտավորությունների ստանձնում	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0
Ֆինանսական անանցյալներ (բացառությամբ պահուստների) և աշխատողների ֆոնդային օպցիոններ	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0

ԼՂՏ ՎՃԱՐԱՅԻՆ ՆԱՇՎԵԿՇԻՌ

	2015				2016			
<b>Այլ ներդրումներ</b>	-24497,7	-19070,4	-21866,6	-4621,7	-13590,6	-23672,9	-22296,2	-26791,8
Չուտ ֆինանսական ակտիվների ձեռք բերում	52977,3	76722,3	63844,8	79561,1	60374,6	68703,5	81065,3	95600,3
Չուտ պարտավորությունների ստանձնում	77475,0	95792,7	85711,4	84182,8	73965,2	92376,4	103361,5	122392,1
<b>Պահուստային ակտիվներ</b>	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0
<b>Չուտ սխալներ և բացթողումներ</b>	974,2	-3432,0	-2796,3	8488,9	-5217,1	-8351,5	-4005,4	-1426,3